ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1960 Общественные науки

Ս. Ա. Բեհբուդյան

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿԸ

Մեր մեծ գրողներից մնացած ամեն մի անհայտ ու անտիպ էջ սրբության կտակ է մեզ համար. ահա այս նկատառումով ստորև բերում ենք Պռոշյանի, հավանաբար Գևորգյան ճեմարանի տեսուչին ուղղված մի անտիպ նամակը, որը նոր լույս է սփռում անվանի գրողի դժվար կյանքի և ընտանեկան ծանր պայմանների վրա, մանավանդ նրա ծերության շրջանում։

Նամակից երևում է, որ Պռոշյանը իր կրտսեր որդուն Լազարյան ճեմարանում գիշերօթիկ որդեգիր ընդունել տալու համար մեծ դժվարությունների առաջ է կանգնում։ 1905 թ. կնոջ մահը, մեծ որդու՝ Պռոշի աքսորը Սիբիր՝ հեղափոխական գործունեության համար, մեծ վիշտ են պատճառում նրան։ Այս բոլորին գումարած բազմանդամ ընտանիքի ծանր պայմանների հոգսը ծայր աստիճան հուսալքության և հոգեկան տանջանքների մեջ են գցում նրան։ Եվ այդ է պատճառը, որ այս նամակը գրելուց մեկ տարի հետո, 1907 թ. վախճանվում է «բախտազուրկ և վշտամեռ» Պռոշյանը։

(Սրբազան հայր և բարեկամ)

3 փետրվարի 1906, Բաքու.

Երեք օր է եկել եմ Պետերբուրգից. տասն օրի չափ մնացի Մոսկվայում. այնտեղ Լազարյան ճեմարանում իմացա, որ իշխան Ալա—Մելիք Լազարևի թյուրիմացության շնորհիվ ճեմարանի վարչությունը կրտսեր որդուս ճեմարան ընդունելու հարցով դիմել է Ձեզ։

Խնդիրն այն է, որ իշխանը իմ իրեն արած դիմումներս համարել է բոլորը ձեր գրած հանձնարարականի բովանդակությանը։ Որքան հիշում եմ, Դուք խնդրել էիք իշխանից միջնորդել,—կարևոր տեղերում և ազդեցիկ մարդկանց մոտ, դաժանակիր աշխատանքի դատապարտված որդուս վիճակը թեթևացնելու համար, բայց որովհետև ես իշխանին դիմեցի և երկու այլ խնդիրներով, նա բոլորը վերադրել է Ձեր նամակի բովանդակությանը։ Իշխանից ես խնդրեցի փոքր որդուս՝ Պապարին ընդունել Լազարյան ճեմարանում գիշերօթիկ որդեգիր։ Բանից դուրս է գալիս, որ Լազարյան ճեմարանի կանոններով՝ որդեգիր ընդունում է մինչև 12 տարեկան հասակը և ոչ վեր, քան երկրորդ դասարանը։

Իշխանը, ի հարգանս Ձեր, ինչպես բացառություն, խոստացավ գրել Լազարյան ճեմարանին հարցնելով որդուս 15—16 տարեկան հասակի համար վարչության կարծիքը, հառաջ բերելով Ձեր միջնորդությունը։ Ճեմարանի վարչությունն էլ յուր կողմից Ձեզ է ձանձրություն պատճառել, փոխանակ ինձ դիմելու իշխանի ձևերով. այն ժամանակ ես նստած էի Պետերբուրգում և իշխանին հայտնի էր իմ հասցեն։ Հետևաբար՝ Լազարյան ճեմարանի Ձեզանից արած հարցը Ձեզ տարակուսության առիթ է տվել և Դուք նեղություն ևս կրել ինձ գրելու, որը երեկ միայն կարդացի Բաքվում։

Արդեն ես Մոսկվայում ինչ որ կարևորն էր արի. ճեմարանի գիտությամբ գրեցի Թիֆլիսի գիմնազիան, ուր ուսանում է որդիս և խնդրեցի ուղարկել պարտ ու պատշաճ տեղեկությունները Լազարյանց ճեմարանի վարչությանը։

Բացի վերոգրյալ երկու խնդրից, ես իշխանին մի երրորդ դիմումն էլ արի. խնդրեցի յուր սեփական միջոցներից նշանակել ինձ համար ամսական հիսուն ռուբլի կենսաթոշակ։

Արդեն առաջին երկու խնդիրներիս պատասխանները իշխանը տվել էր. աքսորական որդուս համար նա այնքան հաստատ հույս չտվեց, միայն խոստացավ աշխատել ըստ յուր կարողաց. փոքր որդուս համար, ինչպես պատմեցի, խոստացավ գրել Լազարյան ճեմարան, իսկ կենսաթոշակիս համար կացու կամ խոսքեր անելով՝ ծայրին կապ տվեց։ Երեք օրից հետո,

սակայն, իշխանի գրասենյակի կառավարիչը եկավ մոտս, հայտնեց որ իշխանն արդեն գնաց արտասահման, հետևաբար՝ ոչինչ չէր կարող անելու աբսորականիս համար, փոքր որդուս համար արդեն գրեց Լազարյան ճեմարանին, իսկ մի ծրարով տվեց ինձ իշխանից ուղարկած 500 ռուբլի փող, որով ընդմիշտ վերջ տվեց, հասկանալի է, կենսաթոշակի հարցին։ Շնորհակալությամբ ստացա գումարը, իսկ գլխավոր շնորհակալությունն այդ մասին, ինչպես և իշխանին արածս երկու վերոգրյալ խնդիրների մասին՝ ամենայն իրավամբ՝ Ձեզ է վերաբերում. եթե Ձեր նամակը չլիներ, ոչինչ բանով իշխանը ինձ չէր ընդունել և ուշադիր լիներ։

Ընդունիր ուրեմն սրբազան ջան նվաստ, բախտագուրկ և վշտամեռ բարեկամիդ սրտալիր շնորհակալությունը ոչ միայն իշխանին արած դիմումիդ առթիվ, այլև այն շնորհացը, որ արժանի եղա ես Ձեր քաղցր հանձնարարականների ազդեցությամբ։ Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը որոշեց, ի հարկե, ձեր բժշկապետ Վարդանյանցին գրած նամակի շնորհիվ՝ փոքր աղջկանս—Շուշանիկին տարեկան 450 մանեթ, հինգ տարի ժամանակով արտասահմանում բժշկականություն ուսանելու, բացի դրանից միանվագ նպաստ տվեց ինձ 400 ռուբլի, իսկ Մոսկվայում պ.պ. Մամիկոնյանն ու Տերյանցը խոստացան ժամանակին անել՝ ինչ որ տարաբախտ զավակիս ազատության համար անհրաժեշտ է, առ այժմ ընդհանրության կարծիքով պիտի այդ խնդիրը չշարժել. բավական էր այսքանը, որ զավակիս պատիժը հոկտեմբեր 21-ի կայսերական հրովարտակի զորությամբ՝ ի թիվս ուրիշների՝ կիսով չափ պակասեց, այն է՝ 10 տարին իջավ հնգի, հույս կա, որ պետական դուման բացվելուց՝ ընդհանուր ներումն լինի բոլոր քաղաքական հանցավորներին, ընդ որս և իմ որդուն։ Ուրեմն առ այժմ պիտի դադար առնել։

Ընդունիր ուրեմն, անկեղծ բարեկամ, սրբազան ջան, իմ առ ի սրտե խորին սիրո և հարգանաց հավաստիքը։ Փեսաս և աղջիկս սուրբ աչդ համբուրում են։

Վշտակոծ նվաստ ծառայդ Պերճ Պողոսյանց

Հ. Գ—Նամակիս հետ այսօր փոխադրեցի իմ պարտքս հիսուն ռուբլին, ներիր, որ ծախող հանգամանքների պատճառով ուշացրի։

ՊԵՐՃ

Սեդրակ Մելիք Սարգսյանցին ողջույն։ Նույնը պ. Կրպեին և յուր հարս Հեղինեին։